ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1706 16.05.2017թվ.

ՀՀ ոստիկանության պետ,
գեներալ-գնդապետ
պարոն՝ Վ. Գասպարյանին

Հարգելի պարոն Գասպարյան,

Սույն թվականի մայիսի 13-ին Դիտորդական խումբը հերթական այցելություն կատարելով ՀՀ ոստիկանության Արարատի ՄՎ Մասիսի ՁՊՎ արձանագրեց մի շարք թերություններ:

1. ՁՊՎ-ում առկա սպիտակեղենը գտնվում էր խցերում և շատ կոկիկ տեղադրված էին պոլիէթիլենային թաղանթների մեջ: Դրանք թաղանթներից հանելուց և ուսումնասիրելուց հետո պարզվեց, որ մաքուր սպիտակեղենի հետ առկա էին օգտագործված և շատ կեղտոտ սպիտակեղեն:
2. ՁՊՎ-ն ընդհանուր գտնվում էր փոշոտ և կեղտոտ վիճակում: Պատասխանատու ոստիկանը մեկնաբանեց, որ ոստիկանության շենքում վերանորոգման աշխատանքներ են կատարվում, դրանից է կեղտոտ վիճակ, բայց ներկայացված փաստարկը ոչ մի կապ չունի ՁՊՎ-ի հետ, քանի որ ՁՊՎ-ն առանձին է և վստահ կարող ենք ասել, որ այցելությունից 8-ից 10 օր առաջ ՁՊՎ-ում ոչ մի մաքրման աշխատանքներ չեն կատարվել: Բացի փոշոտ լինելը, ընդհանուր ՁՊՎ-ն կեղտոտ էր:
3. ՁՊՎ-ի տեսակցության սենյակը չէր գործում և ծառայում էր որպես պահեստային մաս և պարզ չէր թե որքան ժամանակ է ինչ չի գործում և քանի ձերբակալված հնարավորություն չի ունեցել օգտվել իր տեսակցության իրավունքից, քանի որ չենք կարծում, որ այլ տեղ հնարավոր է նրանց տեսակցությունը կազմակերպել:

Այսպիսով՝ խնդրում ենք ուսումնասիրել ներկայացված փաստերը և տալ մեկնաբանություն:

Հարգանքով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝ Ս.Բսկանդարյան

3295
18 05 2017թ.

ՀՀ.Երևան 0033,Բաղրամյան 79/45 Հեռ./ֆաքս: (+374 10) 52 81 87
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org

2389
17 05 17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ

0025 ք.Երևան, Նալբանդյան 130, Հեռ.՝ (010) 59-65-94, Ֆաքս՝ (010) 59-63-11, էլ.փոստ staff@police.am

№ 2/2-1-2071 «16» 06 2017թ.

Ձեր 16.05.2017թ. թիվ 2621/1706 գր.

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալվածներին պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի նախագահ Ս.Իսկանդարյանին

Հարգելի պարոն Իսկանդարյան

Հայտնվում է, որ դիտորդների խմբի կողմից 2017թ. մայիսի 13-ին ՀՀ ոստիկանության Արարատի մարզային վարչության Մասիսի բաժնի ձերբակալվածներին պահելու վայր կատարած այցելության ընթացքում ՀՀ ոստիկանություն ներկայացված ընթացիկ հաշվետվությունում նշված հանգամանքներն ուսումնասիրվել են ՀՀ ոստիկանության շտաբում, իսկ ՀՀ ոստիկանության Արարատի մարզային վարչությունում կատարվել է ծառայողական քննություն:

Ծառայողական քննությամբ պարզվել է, որ ոստիկանության Մասիսի բաժնի հերթապահ մասի պետ Հ.Ա-ն իր գործառութային պարտականությունները կատարել է ոչ պատշաճ, ինչի համար խիստ նախազգուշացվել է, իսկ արձանագրված թերություններն արդեն իսկ վերացվել են:

ՀՀ ոստիկանության շտաբի ՀԾՎ